ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՆ WWW.TATEVER.AM ԿԱՅՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՌՑԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

Սույն Պայմաններում՝

«Մենք», «Մեզ» կամ «Ընկերություն» բառերը վերաբերում են «Իսթեյթ Մենեջմենթ ընդ Ադմինիսթրեյշն Քամփնի » Փակ Բաժնետիրական Ընկերությանը:

«Դուք» և «Ձեր» բառերը վերաբերում են պատվեր իրականացնող անձին:

«Տաթևեր» ճոպանուղու տոմսերի առցանց գնումներն իրականացվում են սույն Պայմաններին համապատասխան (այսուհետ՝ «Տոմսերի Պայմաններ»): «Տաթևեր» ճոպանուղու տոմս գնելով՝ Դուք համաձայնվում եք սույն Տոմսերի Պայմանների և Գաղտնիության քաղաքականության հետ, որը ներկայացված է որպես սույն Տոմսերի Պայմանների Հավելված 1: Դուք նաև համաձայնվում եք օգտագործել ձեռքբերված տոմսերը սույն Պայմաններին համապատասխան: Ուստի, տոմս գնելուց առաջ խնդրում ենք ուշադիր կարդալ սույն Տոմսերի Պայմանները և Հավելված 1-ը:
Տոմսերը ամրագրելիս, հաճախորդը հաստատում է, որ կարդացել և հասկացել է Տոմսերի Պայմանները և Գաղտնիության քաղաքականությունը և համաձայնվել է դրանց հետ:

1. Ճոպանուղու ծառայություններ և Տոմսի ձեռքբերում

1.1. Ընկերությունը մատուցում է ճոպանուղով ուղևորվելու ծառայություններ՝ Հալիձորի կայարանից մինչև Տաթևի կայարան, և Տաթևի կայարանից մինչև Հալիձորի կայարան:
1.2. Տոմսերը հնարավոր է գնել www.tatever.am կայքում (այսուհետ՝ Կայք)՝ բանկային կրեդիտ կամ դեբիտ քարտի միջոցով:
1.3 Կայքում էլեկտրոնային պատվերը լրացնելով և տեղադրելով՝ Դուք ընդունում/ակցեպտավորում ենք մեր առաջարկը:
1.4 Կայքի միջոցով Ձեր օնլայն ամրագրումը կհամարվի պարտադիր միայն այն դեպքում, երբ Մենք կմշակենք Ձեր վճարումն ու այդ մասին Ձեզ կուղարկենք գործարքը հաստատող նամակ, որը և կհամարվի պարտադիր Պայմանագիր: Եթե Դուք պատվերը տեղադրելուց հետո էլեկտրոնային հասցեին չեք ստացել նամակ-հաստատում, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ հետևյալ հեռախոսահամարով. +374 96 46 33 33, կամ ուղարկեք նամակ reservations@tatever.am հասցեին:

1.5 Ուշացում առաջանալու դեպքում Մենք պատասխանատվություն չենք կրում և չենք ընդունի Ձեր պատվերը, եթե վճարումը չվավերացվի:
1.6 Բոլոր գներն ու սակագները ներառում են կիրառելի հարկերն ու ավելացված արժեքի հարկը:
1.7 Մենք պատասխանատվություն չենք կրում առցանց գնում իրականացնելու ընթացքում Ձեր կողմից կատարված որևէ սխալի համար՝ ներառյալ (բայց չսահմանափակվելով) սխալ ընտրված ամսաթվի, ժամանակի կամ տոմսերի քանակի համար: Խնդրում ենք նախքան գնումը հաստատելը համոզվել, որ Ձեր ընտրությունը ճիշտ է, քանի որ տոմսերը հետագա

փուլում չեն կարող փոխանակվել կամ վերադարձվել: Կորած, գողացված կամ վնասված տոմսերը փոխարինման ենթակա չեն:
1.8 Տոմսի առկայությունը չի երաշխավորում, որ ճապանուղով ուղևորության ժամանակ դուք ապահովված կլինեք նստելու տեղով:
1.9 «ՏԱԹևեր» ճոպանուղով ուղևորություն կատարելու համար, դուք պետք է 1) սարքավորման օգնությամբ սքանավորեք էլեկտրոնային տոմսը հեռախոսի կամ Ipad-ի միջոցով: 2) սքանավորեք տոմսի թղթային տարբերակը, որը դուք տպել եք ձեր էլեկտրոնային հասցեից, կամ 3) սքանավորեք տոմսի թղթային տարբերակը, որը դուք ստացել եք տոմսարկղից, ցույց տալով էլեկտրոնային գնում կատարելու հաստատումը

2. Ձեր տվյալները
2.1 Մենք վստահեցնում ենք, որ տոմսերի ձեռքբերումը կայքի միջոցով միանգամայն անվտանգ է: Այցելուների անձնական տվյալների պահպանության անվտանգությունն ապահովելու նպատակով Մենք օգտագործում ենք տվյալների ծածկագրման նորագույն տեխնոլոգիաները: Առավելագույն անվտանգություն ապահովելու նպատակով՝ պատվերի վերաբերյալ բոլոր տեղեկությունները (այդ թվում՝ բանկային քարտերի անուններն ու տվյալները) ծածկագրված են: Ամրագրման ընթացքում վճարման և բանկային քարտի վերաբերյալ տեղեկություններին հնարավոր չէ հետևել:
2.2 Կայքով տոմս գնելիս, Մենք մենք հավաքագրում ենք ձեզ վերաբերյալ տեղեկությունները՝ սույն Տոմսերի Պայմանների անբաժանելի մաս հանդիսացող Հավելվածի թիվ 1-ի՝ Գաղտնիության քաղաքականության համաձայն:

3.Տոմսերի վերադարձ և փոխանակում
3.1. Տեղեկացնում ենք, որ վաճառված տոմսերը վերադարձման ենթակա չեն:
3.2. Եթե ցանկանում եք փոխանակել «ՏԱԹևեր» ճոպանուղու՝ Ձեր կողմից գնած տոմսը այլ ժամվա և/կամ օրվա նույնանման տոմսով, ապա, այն ենթակա կլինի փոխանակման միայն ստորև նշված պայմանների պահպանման պարագայում.

3.2.1. Ձեր տոմսը անվճար կփոխանակվի, եթե:
- Դուք ներկայացրել եք տոմսի փոխանակման գրավոր պահանջ համապատասխան նամակ՝ ուղարկելով reservations@tatever.am էլեկտրոնային հասցեին, ակնկալվող ուղևորության օրվանից առնվազն 1 /մեկ/ օր առաջ:
- Տոմսը չի օգտագործվել:
- Հաճախորդը կարող է տրամադրել հաստատման գաղտնաբառը, գնորդի անունը:

3.2.2. Ձեր տոմսը կփոխանակվի համապատասխան վճարի (100 ՀՀ դրամ) դիմաց, եթե.
- Դուք ներկայացրել եք տոմսի փոխանակման գրավոր պահանջ՝ նամակ ուղարկելով reservations@tatever.am էլեկտրոնային հասցեին, ակնկալվող ուղևորության օրվանից 14 /տասնչորս/ օր անց:
- Տոմսը չի օգտագործվել:
- Հաճախորդը կարող է տրամադրել հաստատման գաղտնաբառը, գնորդի անունը:

3.3. Փոխանակման արդյունքում Ձեզ տրամադրվող նոր տոմսի օրը պետք է լինի ակնկալվող ուղևորության օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում:

4. Վարքագծի կանոններ

4.1 Ճոպանուղով ուղևորության ժամանակ, ինչպես նաև խցիկում, ուղևորները պատք է ձեռնպահ մնան.

ա) սնունդ և ըմպելիքներ օգտագործելուց
բ) ծխելուց, այդ թվում՝ էլեկտրոնային ծխախոտ
գ) գույքը վնասելուց
դ) զենք, պայթուցիկ նյութեր կամ այլ թունավոր, դյուրավառ, ռադիոակտիվ կամ վտանգավոր նյութեր կրելուց
ե) կենդանիներ բերելուց (բացառությամբ փոքր ցեղատեսակների, որոնց կարելի է պահել ձեռքերի վրա)
զ) այնպիսի իրավիճակներ ստեղծելուց, որոնք վտանգում են այլ ուղևորների և անձնակազմի անվտանգությունը, առողջությունը, կամ արժանապատվությունը:

4.2 Անձնակազմի աշխատակիցները կարող են արգելել մուտք գործել «Տաթևեր» օդային ճոպանուղի այն ուղևորների, ովքեր.

ա) հարբած են կամ թմրանյութերի ազդեցության տակ
բ) ցուցաբերում են ոչ պատշաճ վարքագիծ
գ) հագնված փակ տարածության համար ոչ պատշաճ կերպով:

4.3 12 տարեկանից ցածր տարիքի երեխաները պետք ուղևորվեն մեծահասակների ուղեկցությամբ: Սահմանափակ շարժողականություն կամ տեսողություն ունեցող ուղևորները պետք է ուղևորվեն իրենց անվտանգությունը ապահովող ուղևորների հետ:

4.4 Եթե ուղևորության ժամանակ խցիկը կանգ առնի, խնդրում ենք սպասել մինչը ուղևորությունը կվերականգնվի, մնացեք հանգիստ և հետևեք անձնակազմի հրահանգներին:

4.5 Սույն պարբերությունում նշված Վարքագծի կանոնները խախտող ուղևորներին, ստիպված ենք լինելու խնդրել լքել «Տաթևի դարպասներ» համալիրի տարածքը:

5. Այլ դրույթներ

Մենք իրավունք ենք վերապահում ժամանակ առ ժամանակ փոփոխել սույն Տոմսերի Պայմանները: Նոր Տոմսերի Պայմանները կտեղադրվեն մեր Կայքում: Եթե Դուք չեք ընդունում վերանայված Տոմսերի Պայմանները, Դուք այլևս չպետք է որևէ պատվեր տեղադրեք մեր Կայքում:
Սույն Տոմսերի Պայմանները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Դուք և Մենք համաձայնվում ենք, առ այն, որ բոլոր հնարավոր վեճերը լուծվելու են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:
Եթե սույն Տոմսերի Պայմանների որևէ բաժին օրենքով սահմանված կարգով ճանաչվի անվավեր, ապա մնացած մասերը մնում են ուժի մեջ և ենթակա են կատարման:

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Իսթեյթ Մենեջմենթ ընդ Ադմինիսթրեյշն Քամփնի » Փակ Բաժնետիրական Ընկերությունը («Ընկերություն՝) հանձն է առնում կատարել գործող օրենսդրությամբ և 2016 թվականի «Ընդհանուր տվյալների պաշտպանության Կանոնակարգով» նախատեսված իր պարտավորությունները, ինչպես նաև պաշտպանել այն անձանց իրավունքները և ազատությունները, ում անձնական տվյալները ձեռք են բերվել կամ ստեղծվել Ընկերության կողմից՝ վերջինիս գործունեության շրջանակներում:

Ընկերությունը ճոպանուղու ուղևորությունների կազմակերպման ծառայություններ, որոնց շրջանակներում Ընկերությունը կարող է մշակել ձեր անձնական տվյալները: Ընկերությունը ամենայն պատասխանատվությամբ է վերաբերվում ձեր անձնական տվյալների, գաղտնիությանը և անվտանգությանը պահպանմանը:

Անձնական տվյալների հավաքագրումը և մշակումը

Մենք հավաքարգում ենք ձեր անձնական տվյալները այն ժամանակ, երբ դուք դրանք մուտքագրում եք «Տաթևեր» ճոպանուղու ուղևորության տոմսեր առցանց եղանակով գնելու նպատակով: Ընկերության կողմից ճոպանուղու ուղևորությունների կազմակերպման ծառայությունների մատուցման նպատակով, Ընկերչությունը պետք է հավաքագրի այն անձանց տվյալները, ովքեր ցանկանում են առցանց եղանակով ձեռք բերել «Տաթևեր» ճոպանուղու ուղևորության տոմսեր:

Ընկերությունը պարտավորվում է ապահովել, որ իր կողմից անձնական տվյալների հավաքագրումը և օգտագործումը ուղղված է լինելու իր գործունեության իրականացման նպատակին և չի հանգեցնելու անձնական կյանքի ներխուժման: Սույն բաժինը սահմանում է Ընկերության կողմից տարբեր հանգամանքներում հավաքագրվող անձնական տվյալների տեսակները և դրանց օգտագործման մանրամասները:
Ընկերությունը օգտագործում է Ձեր անձնական տվյալները հետևյալ նպատակներով՝

- Տաթևեր ճոպանուղու տոմսեր ձեզ վաճառելու նպատակով:
- Ճոպանուղու ուղևորության ծառայությունների մատուցելու նպատակով, այդ թվում՝ դեպի Տաթևի կայարան և Տաթևի կայարանից ձեր փոխադրումը կազմակերպելու նպատակով:
- Ձեր խնդրանքով այլ օժանդակ ծառայություններ մատուցելու նպատակով, ինչպիսի օրինակ՝ զբոսավարի ծառայությունների կամ Տաթևում տուրիստական ծառայությունների կազմակերպում:
- Ընկերության կողմից Ձեր և Ընկերության միջև կնքված ցանկացած պայմանագրից ծագող պարտավորությունների կատարման նպատակով:
- Ձեր մասնակցությունը Ընկերության կողմից կազմակերպվող միջոցառումներին կամ, ցանկության դեպքում, միջոցառումների կազմակերպման աշխատանքներին թույլատրելու նպատակով:
- Ընկերության կողմից ապագա միջոցառումների, տոմսերի և այլ ծառայությունների գների , ինչպես նաև այլ ծրագրերի վերաբերյալ ձեզ տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

- Նամակներ, տեղեկատվական նյութեր ուղարկելու նպատակով:
- Ձեր անձնական տվյալները բացահայտելու կամ տրամադրելու նպատակով, այն դեպքում, երբ Ընկերությունը օրենքի ուժով պարտավոր է դա անել:

Ընկերությունը կարող է օգտագործել և բացահայտել Ձեր անձնական տվյալները, այն դեպքում, երբ գտնում է, որ տվյալների օգտագործումը անհրաժեշտ է Ընկերության կողմից իր բնականոն գործունեության իրականացման համար: Անձնական տվյալների օգտագործումը իրականացվում է.

- Հաշիվներ, հաշիվ-ապրանքագրեր դուրս գրելու, վճարումներ իկատարելու նպատակով:
- Ձեր անձնական տվյալները, այդ թվում՝ Ձեր մասնակցությամբ նկարները և տեսահոլովակները տարբեր հեռուստատեսային ալիքներում, ինչպես նաև սոցիալական ցանցերում տեղադրելու նպատակով:
- «Ընկերության կողմից կազմակերպվող միջոցառումների, տոմսերի և այլ ծառայությունների գների վերաբերյալ ձեզ տեղկացնելու նպատակով, որոնք Ընկերության կարծիքով կարող են ձեզ հետաքրքրել:

Մենք կիրառում ենք համապատասխան տեխնիկական և կազմակերպչական միջոցներ Ձեր անձնական տվյալները պաշտպանելու համար:

Ձեր անձնական տվյալները ներառվելու են մեր տվյալների բազայում, որը պահվում է, ինչպես կազմակերպության ներսում (մեր սեփական սերվերների վրա), այնպես էլ արտաքին կրիչների վրա՝ «ամպային» լուծումների կիրառմամբ: Կիրառվող «ամպային» լուծումների ցանկը կարող է տրամադրվել ըստ պահանջի: Ընկերությունը պահում և մշակում է տեղեկությունը Հայաստանում գտնվող սերվերների վրա:

Տվյալների սուբյեկտների իրավունքները

Հանդիսանալով տվյալների սուբյեկտ, դուք ունեք համապատասխան իրավունքներ, որոնցից կարող եք օգտվել, երբ Ընկերությունը պահում կամ մշակում է Ձեր անձնական տվյալները: Մասնավորապես՝

- **Հասանելիության իրավունք** - դուք իրավունք ունենք խնդրել ձեզ տրամադրել Ընկերությունում պահպանվող ձեր անձնական տվյալների օրինակը:
- **Ուղղումներ կատարելու իրավունք** - դուք իրավունք ունեք ուղղելու Ընկերությունում առկա Ձեր վերաբերյալ ոչ ստույգ և թերի տվյալները:
- **Մոռացված լինելու իրավունք-** որոշակի հանգամանքների առկայության դեպքում, դուք իրավունք ունեք խնդրել վերացնել Ընկերությունում պահվող ձեր բելեր անձնական տվյալները
- **Մշակումը սահմանափակելու իրավունք** - որոշակի հանգամանքների առկայության դեպքում, դուք իրավունք ունեք սահմանափակելու Ձեր անձնական տվյալների մշակումը:
- **Տեղափոխելու իրավունք** – դուք իրավունք ունեք Ընկերությունում պահպանվող Ձեր անձնական տվյալները տեղափոխել այլ կազմակերպություն:

- **Առարկելու իրավունք** – դուք իրավունք ունեք առարկել Ձեր անձնական տվյալների մշակման որոշակի եղանակների դեմ, ինչպես նաև խնդրել դադարեցնել կամ սահմանափակել Ձեր անձնական տվյալների մշակումը:

Նշված իրավունքները իրականացնելու համար, խնդրում ենք կապ հաստատել Ընկերության հետ՝ «Կոնտակտային տվյալներ» բաժնում նշված էլեկտրոնային հասցեի միջոցով: Այդ դեպքում, երբ Ընկերությունը, հասանելիության իրավունքի հիմքով, մերժում է Ձեր խնդրանքը, ապա վերջինս տրամադրում է մերժման համապատասխան հիմքեր: Դուք ունեք Բողոքներ բաժնում սահմանված կարգով բողոք ներկայացնելու իրավունք:

Անձնական տվյալների մշակման հիմքերը

Ընկերությունը մշակելու է Ձեր անձնական տվյալները բացարձակապես իրավական հիմքերի առկայության դեպքում: Տվյալների մշակման համապատասխան իրավական հիմքերը կախված են տվյալների բնույթից և Ընկերության կողմից դրանք օգտագործելու նպատակներից: Նշված նպատակները/հիմքերը հետևյալն են.

- **Համաձայնությունը.** որոշակի նպատակի համար դուք Ընկերությանը տրամադրել եք Ձեր անձնական տվյալների մշակման համաձայնությունը:
- **Պայմանագիր.** մշակումը անհրաժեշտ է Ձեր և Ընկերության միջև կնքված պայմանագրի կատարման համար, ինչպես նաև այն դեպքում, երբ դուք խնդրել եք հիմնադրամին պայմանագրի կնքումից առաջ ձեռնարկել որոշակի քայլեր:
- **Իրավական պարտավորություններ.** մշակումը անհրաժեշտ է Ընկերության կողմից իր իրավական պարտավորությունները կատարելու նպատակով:
- **Կենսական շահեր**. մշակումը անհրաժեշտ է ինչ-որ մեկի կյանքը պաշտպանելու համար:
- **Օրինական շահեր**. մշակումը անհրաժեշտ է Ընկերության կամ երրորդ կողմի օրինական շահերը պաշտպանելու համար:

Նշված նպատակները իրականացնելու համար Ընկերությանը կարող է հավաքագրել Ձեր անձնական տվյալները, այդ թվում՝ ձեր անունը, էլեկտրոնային հասցեն, հեռախոսահամարը:

Անձնական տվյալների պահպանման պայմանները

Ընկերությանը պահպանելու է Ձեր անձնական տվյալները այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է այն նպատակները իրականացման համար, որոնց համար դրանք տրամադրվել են, կամ, օրենքով սահմանված դեպքերում ավելի կարճ կամ առավել երկար ժամկետով: Սովորաբար, յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ին Ընկերությունը ոչնչացնում է նախորդ տարվա ընթացքում հավաքագրված անձնական տվյալները: Դուք կարող եք հետ կանչել անձնական տվյալների մշակման Ձեր համաձայնությունը՝ ստորև նշված կոնտակտային հասցեով էլեկտրոնային նամակ ուղարկելու միջոցով: Ձեր նամակը

ստանալուց հետո Ընկերությանը ապահով եղանակով կոչնչացնի ներքին և/կամ արտաքին բազաներում պահպանվող Ձեր անձնական տվյալները:

Կոնտակտային տվյալներ

Հարցերի դեպքում, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ info@tatever.am. էլեկտրոնային հասցեի միջոցով:

Բողոքներ

Եթե դուք ցանկանում եք բողոք ներկայացնել առ այն, թե ինչպես է Ընկերությունը մշակվում Ձեր անձնական տվյալները կամ առ այն, թե ինչպես է դիտարկվել Ձեր կողմից ներկայացված հարցումը, դուք կարող եք կապ հաստատել մեզ հետ հետևյալ էլեկտրոնային հասցեի միջոցով. info@tatever.am. :